«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Վարպետաց 176, 301 հեռ. +(374 312) 6-69-92,
+(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ infi@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական
կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Պարոն Զախարյան
Մեր կազմակերպությունն իրականացնում է Գյումրիում ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման գործընթացի քարոզարշավ և դիտարկում: Ուստի ինքնակամ և փաստաթղթերը չպահպանված կառույցներ տնօրինող և դրանք օրինականացնել ցանկացող մեր համաքաղաքացիներին իրազեկելու և խորհրդատվության նպատակով խնդրում ենք մեզ աջակցել ստանալու հետևյալ տեղեկությունները.
1. ե՞րբ է կատարվել Գյումրիում առկա ինքնակամ կառույցների հաշվառում և քարտեզագրում (խնդրում ենք նաեւ տրամադրել հաշվառման ցուցակն ու քարտեզների կրկնօրինակները),
2. ինչպե՞ս և ու՞մ կողմից է որոշվում վերոհիշյալ օրենքով օրինականացման ենթակա բնակելի կառույցների կառուցման տարեթիվը, ամիսը և օրը,
3. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն դիմումներ ներկայացրած քաղաքացիներն ինչպիսի՞ ծախսեր և ի՞նչ նպատակներով են կատարելու,
4. ինքնակամ և փաստաթղթերը չպահպանված բնակելի կառույցների չափագրումներն ու գծագրումները ովքե՞ր և ի՞նչ ժամկետներում են կատարում:

Կանխավ հայտնում ենք մեր երախտագիտությունն աջակցության համար:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
04.11.2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

375023, ք. Երևան, Արշակունյաց 7,
(+ (3741) 569569; 525481:
Ֆաքս + (3741) 526562

16.11.10 ՏԲ/2.1/4807-10

Ձեր _____ առ _____

<<Քաղաքական մշակույթի և համաձայնությունների
զարգացման <<Շիրակ կենտրոն>> ՀԿ-ի նախագահ
պարոն Վ.Թումասյանին
(ՀՀ, ք.Գյումրի Վարպետաց 176)

Ի պատասխան Ձեր 04.11.2010թ. գրության՝ հասցեագրված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, հայտնվում է հետևյալը.

<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի գործողության ոլորտը տարածվում է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, տիրապետվող և հիշյալ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա անհատական բնակելի տների և դրանց կից օժանդակ շինությունների, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի, ինչպես նաև քաղաքացիներին պատկանող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300քմ սահմանազատված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տների և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունների վրա: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված համայնքի ղեկավարի որոշումը:

Համայնքի ղեկավարի որոշման հետ գրանցող մարմին է ներկայացվում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համապատասխան հողամասի հատակագիծը: Բնակելի կառույցի կառուցման տարեթիվը որոշվում է համայնքի ղեկավարի կողմից:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական

կոմիտեի նախագահի 23.04.2009թ. թիվ 99-Ն հրամանով (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, 22.05.2009թ. թիվ 32209203):

Անշարժ գույքի հաշվառման և չափագրման աշխատանքները իրականացվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 30.09.2008թ. թիվ 307-Ն հրամանով (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, 16.10.2008թ.. թիվ 32208316) հաստատված <<Անշարժ գույքի (հողամասերի, շենք, շինությունների) հաշվառման>> հրահանգի և <<Ուրվագծերի (ձևաթղթերի) և հողամասի, շենք, շինությունների հարկերի մակերեսների հաշվարկի ձևաթղթի լրացման մեթոդական ցուցումների>>-ի պահանջներին համապատասխան՝ կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից::

Կրկին անգամ տեղեկացվում է, որ ՀՀ կառավարության 27.07.2000թ. թիվ 422 որոշմամբ հաստատվել է ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի, տիրազուրկ (լքված) անշարժ գույքի հաշվառման կարգը, որի 12-րդ կետի համաձայն ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի ընթացիկ հաշվառումը իրականացնում է համայնքի ղեկավարը, ուստի Գյումրի քաղաքում առկա ինքնակամ կառույցների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար Դուք կարող եք դիմել համայնքի ղեկավարին: